ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

Ներկայացվող նախագծերի նպատակը Հայրենիքի պաշտպանության ժամանակ հաշմանդամություն ստացած զինծառայողների առողջությանը պատճառված վնասների հատուցման գործընթացի արդյունավետության բարելավումն է:

2. Առկա իրավիճակը և խնդիրները.

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) կարգավորվում են Հայրենիքի պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով (այսուհետ՝ մարտական գործողություն) զինծառայողների առողջությանը պատճառված վնասների հատուցման հետ կապված հարաբերությունները:

Համաձայն Օրենքի՝ Հիմնադրամի շահառու է հանդիսանում նաև այն զինծառայողը, ով մարտական գործողությունների ժամանակ ստացած վնասվածքի կամ խեղման հետևանքով ստացել է առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամություն: Ըստ այդմ, ամսական հավասար վճարումները վճարվում են առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության ժամանակահատվածի համար, իսկ եթե զինծառայողը վերափորձաքննության արդյունքում ճանաչվում է երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա ամսական հավասար վճարումները դադարեցվում են՝ հարուցելով շահառուների դժգոհությունը:

Միաժամանակ, 2023 թվականի փետրվարի 1-ից ուժի մեջ է մտնում է «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքը, որի շրջանակներում արմատապես վերանայվում են հաշմանդամության սահմանման կառուցակարգերը, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող սոցիալական ծառայությունների բովանդակությունը:

Արդյունքում, անցումային շրջանում՝ մինչև «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքի ամբողջական կիրարկումը (մինչ այդ օրենքով նախատեսված ծառայություններն ամբողջ ծավալով մատուցելը), եթե, օրինակ, երկրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձը վերափորձաքննության արդյունքում ճանաչվում է երրորդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա տեղի է ունենում զինծառայողի սոցիալական վիճակի վատթարացում, քանի որ մի կողմից նվազում են զինծառայողի դրամական եկամուտները (հաշվի առնելով երրորդ խմբի զինհաշմանդամների համար սահմանված՝ հաշմանդամության զինվորական կենսաթոշակների և պարգևավճարների չափերը), իսկ մյուս կողմից՝ զինծառայողը դեռևս հնարավորություն չունի ստանալու համապատասխան ծառայություններ:

Օրինակ, երկրորդ խմբի հաշմանդամը Հիմնադրամից ստանում է 200 000 դրամ (սպայական կազմ), 150 000 դրամ (Պայմանագրային կազմ, զորահավաքային կազմ և կամավորներ) և 100 000 դրամ (պարտադիր ժամկետային կազմ):

Վերափորձաքննության արդյունքում երրորդ խմբի հաշմանդամ ճանաչվելու դեպքում հաշմանդամություն ունեցող անձը կսկսի ստանալ՝

1)սպայի դեպքում՝ շուրջ 74 000 դրամ (նվազում է շուրջ 2.7 անգամ),

2) պայմանագրային և զորահավաքային զինծառայողի, կամավորի դեպքում՝ 66 000 դրամ (նվազում է շուրջ 2.3 անգամ),

3) պարտադիր ժամկետայինի դեպքում՝ 66 000 դրամ (նվազում է շուրջ 1.5 անգամ):

Միաժամանակ, Օրենքի դրույթները սահմանափակում են Հիմնադրամի հնարավորությունները:

Մասնավորապես, Հիմնադրամի խորհուրդը կարող է որոշում կայացնել միայն մինչև 2017 թվականի հունվարի 1-ը տեղի ունեցած դեպքերի հատուցման եղանակների (դրամական միջոցների վճարում, բնամթերային ձևով օգնություն, այլ եղանակ) և ժամկետների վերաբերյալ:

Ըստ այդմ, Հիմնադրամը չի կարողանում, իր առաքելությանը համահունչ, որոշակի լրացուցիչ աջակցության ծրագրեր իրականացնել Հիմնադրամի շահառուներին:

Համաձայն գործող օրենքի՝ հատուցում ստանալու իրավունք ունի նաև զոհված զինծառայողի հետ գրանցված ամուսնության մեջ չգտնվող և համատեղ զավակ ունեցող անձը: Վերը նշված դրույթի հիմնական նպատակը զոհված զինծառայողի հետ գրանցված ամուսնության մեջ չգտնվող՝ զոհված զինծառայողի քաղաքացիական ամուսնուն ևս շահառու դառնալու հնարավորություն տալն է:

Սակայն, իրավակարգավորման արդյունքում ունենում ենք մի վիճակ, երբ զինծառայողի զոհվելու կապակցությամբ հատուցման իրավունք է ձեռք բերում և զինծառայողի ամուսինը, և զինծառայողի հետ համատեղ երեխա ունեցող կինը (ում հետ զինծառայողը փաստացի ամուսնաընտանեկան հարաբերությունների մեջ չի գտնվել), ինչը չի բխում վերոնշյալ իրավակարգավորման տրամաբանությունից:

Հստակեցման կարիք ունի նաև դրոշմանիշային վճար վճարող ֆիզիկական անձանց շրջանակը: Այսպես, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքով սահմանված են, մասնավորապես, դրոշմանիշային վճարների հաշվարկման հաշվետու ժամանակաշրջանը և հաշվարկման բազան, դրոշմանիշային վճար վճարողների շրջանակը: Մասնավորապես, նույն օրենքի՝

- 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը, իսկ անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ օրացուցային տարին,

- 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել (դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում)

աշխատանքային պայմանագրով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս աշխատող ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց,

- 11-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ դրոշմանիշային վճար պարտավոր են վճարել (դրոշմանիշային վճար վճարողներ են համարվում) աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերով ՀՀ տարածքում կամ ՀՀ տարածքից դուրս եկամուտ ստացող՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասում նշված անձանց,

- 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված ֆիզիկական անձինք դրոշմանիշային վճարը հաշվարկման բազայի նկատմամբ վճարում են նույն կետով սահմանված դրույքաչափերով, իսկ նույն մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 4-րդ կետերում նշված անհատ ձեռնարկատերերը և նոտարները դրոշմանիշային վճարը վճարում են նույն կետով սահմանված դրույքաչափերով:

- 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 5-րդ և 6-րդ կետերում նշված՝ հարկային գործակալ չհամարվող անձից եկամուտներ ստացող անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Վերոգրյալի համաձայն՝ աշխատանքային կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման քաղաքացիական-իրավական պայմանագրերի շրջանակներում հարկային գործակալ չհանդիսացողներից դրոշմանիշային վճարի հաշվարկման բազա համարվող եկամուտներ ստացող՝ անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաշվետու ժամանակաշրջան է

համարվում յուրաքանչյուր ամիսը, որի հետ կապված դրոշմանիշային վճարը հաշվարկվում և վճարվում է ինքնուրույն մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Վերոնշյալից ելնելով, օրենքով չեն կարգավորում հարկային գործակալ չհանդիսացողներից անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց դրոշմանիշային վճարի հաշվարկման բազա համարվող եկամուտ ստանալու դեպքում նրանց կողմից դրոշմանիշային վճար վճարելու հետ կապված հարաբերությունները:

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրոշմանիշային վճար չեն վճարում նույն հոդվածի 1-ին մասի 1-ին կամ 2-րդ կետում նշված այն անձինք, որոնք նույն գործատուի մոտ աշխատում են միայն մեկ աշխատանքային պայմանագրով, և տվյալ հաշվետու ժամանակաշրջանում ստացման ենթակա աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները՝ հարկերը և պարտադիր այլ վճարները (ներառյալ՝ դրոշմանիշային վճարը) նվազեցնելուց հետո չի գերազանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի չափը: Նույն մասում նշված անձանց փոխարեն դրոշմանիշային վճարները վճարվում են՝

1) ՀՀ պետական մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ ՀՀ պետական բյուջեից.

2) տեղական ինքնակառավարման մարմիններում աշխատող անձանց փոխարեն՝ համապատասխան համայնքի բյուջեից.

3) այլ գործատուների մոտ աշխատող անձանց փոխարեն՝ տվյալ անձանց աշխատավարձ վճարող գործատուի կողմից՝ նրա միջոցների հաշվին:

ՀՀ Ազգային ժողովի կողմից ս.թ. դեկտեմբերի 7-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-387-04.10.2022-ԱՍ-011, ուժի մեջ է մտնում 2023թ. հունվարի 1-ից, բացառությամբ նույն օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից) և «Հայաստանի

Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» (Կ-3871-04.10.2022-ԱՍ-011/1, ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից) օրենքների նախագծերը, որոնց համաձայն՝ նվազագույն ամսական աշխատավարձի, գործավարձով և ժամավճարով վարձատրվող աշխատողների համար սահմանված ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափերի մեջ չեն ներառվում աշխատավարձից վճարվող հարկերը, նպատակային սոցիալական կամ օրենքով սահմանված պարտադիր այլ վճարները, հավելումները, հավելավճարները, պարգևատրումները եւ լրավճարները:

3. Առաջարկվող լուծումները

Հաշվի առնելով վերը նշվածը՝ ներկայացվող նախագծով առաջարկվում է համապատասխան փոփոխություններ կատարել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում և.

1) Հիմնադրամի խորհրդին լիազորել՝ իր սահմանած պայմաններով և կարգով լրացուցիչ սոցիալական ծառայություններ մատուցել Հիմնադրամի շահառուներին,

2) անցումային շրջանի համար (մինչև «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» ՀՀ օրենքի ամբողջական կիրարկումը) դրամական աջակցություն վճարել այն զինծառայողների համար, ովքեր ունեցել են առաջին կամ երկրորդ խմբի կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն (ճանաչվել են հիմնադրամի շահառու) և բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում ճանաչվում է երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ:

Դրամական աջակցության չափն առաջարկվում է՝ սպայական կազմի զինծառայողներին՝ 75 000 դրամ, պայմանագրային և զորահավաքային կազմի զինծառայողներին, կամավորականներին՝ 50 000 դրամ, պարտադիր ժամկետային կազմի զինծառայողներին՝ 25 000 դրամ:

Խնդրո առարկա չափերը սահմանվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս անձինք ստանալու են նաև հաշմանդամություն զինվորական կենսաթոշակ և համապատասխան պարգևավճար:

Հաշվի են առնվել նաև հիմնադրամի շահառուների ամսական վճարների չափերը, քանի որ այդ զինծառայողները ՀՀ պետական բյուջեից կենսաթոշակ և պարգևավճար չեն ստանալու:

Համաձայն Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տվյալների՝ առ 29.08.2022թ. 44-օրյա պատերազմի հետևանքով երրորդ խմբի հաշմանդամություն է սահմանվել 114 անձի, ովքեր նախկինում հանդիսացել են երկրորդ խմբի հաշմանդամներ (հիմնադրամի շահառուներ):

Ըստ այդմ, հիմնադրամի շահառու հանդիսացած՝ բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում երրորդ խմբի կամ ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված անձանց թիվը կանխատեսվում է 160, որից՝ սպայական՝ 20, պայմանագրային, զորահավաքային և կամավորական՝ 60, պարտադիր ժամկետային՝ 80: Հիմնադրամի ծախսը կկազմի.

	Հատուցում (հիմնադրամ)	***Քանակ***	***Ամսական ծախս***	***Տարեկան ծախս***
Սպայական կազմ	***75,000***	***20***	***1 500 000***	***18 000 000***
Պայմանագրային ենթասպայական և շարքային կազմեր, կամավորագրված	***50,000***	***60***	***3 000 000***	***36 000 000***
Պարտադիր ժամկետային	***25,000***	***80***	***2 000 000***	***24 000 000***
Ընդամենը		***160***	***6 500 000***	***78 000 000***

Բացի այդ, դրոշմանիշային վճար վճարելու պարտավորություն ունենալու և այդ պարտավորության առկա լինելու դեպքում դրոշմանիշային վճարը հաշվարկելու և վճարելու հաշվետու ժամանակաշրջանի և դրույքաչափերի կարգավորման անհրաժեշտությունից ելնելով, նախագծով սահմանվել է, որ հարկային գործակալից կամ Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների

համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում օրացուցային ամիսը, իսկ հարկային գործակալ չհանդիսացողից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի և նոտարների համար՝ օրացուցային տարին: Հայաստանի Հանրապետության անունից կնքված և վավերացված պայմանագրերի դրույթների համաձայն՝ հարկային գործակալի պարտավորությունից ազատված անձից եկամուտ ստացող անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձինք տվյալ հաշվետու ժամանակաշրջանի համար դրոշմանիշային վճարը վճարում են ինքնուրույն մինչև տվյալ հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 20-ը ներառյալ:

Միաժամանակ, ներկայացվող նախագծով առաջարկվում է սահմանել, որ համատեղ զավակ ունեցող անձը հատուցման իրավունք ունի, եթե զինծառայողը չունի ամուսին (եթե հատուցման դեպքը տեղի ունենալու օրվա դրությամբ զինծառայողը չի գտնվել գրանցված ամուսնության մեջ այլ անձի հետ):

Հաշվի առնելով, ՀՀ Ազգային ժողովի կողմից ս.թ. դեկտեմբերի 7-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունված «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքները, նախագծով առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասը:

Նույն հոդվածի 5-րդ մասում հստակեցվում է, որ ժամկետային պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող կամ զոհված (մահացած) զինծառայողի ծնողը, ամուսինը և (կամ) զավակը (զավակները) իրավունք ունեն դիմելու նախորդ տարվա եկամուտներից վճարած (նրանց եկամուտներից հարկային գործակալի պահած և

պետական բյուջե փոխանցած) դրոշմանիշային վճարի գումարներն ամբողջությամբ կամ մասնակիորեն վերադարձնելու պահանջով:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Նախագիծն ընդունվելու դեպքում Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը իրավասություն կստանա Կառավարության համաձայնությամբ իրականացնել համապատասխան ծրագրեր (այդ թվում՝ այն միջոցների հաշվին, որոնք այսօր վերադարձվում են):

Միաժամանակ, կբարելավվի նաև այն զինծառայողների սոցիալական վիճակը, ովքեր հանդիսացել են Հիմնադրամի շահառու, սակայն ճանաչվել են երրորդ խմբի հաշմանդամ:

Կհստակեցվի նաև զինծառայողի հետ համատեղ զավակ ունեցող անձի հատուցման իրավունքը, ինչպես նաև օրենքով կկարգավորվի անհատ ձեռնարկատեր և նոտար չհանդիսացող ֆիզիկական անձի կողմից դրոշմանիշային վճար վճարելու հետ կապված հարաբերությունները:

Զորքերի կազմ	**Երրորդ խումբ**				**Ընդամենը Երկրորդ խումբ**
	Հաշմանդամ. զինվորական կենսաթոշակ	Պարգևավճար	Հատուցում (հիմնադրամ)	**Ընդամենը**	
Սպայական կազմ	***38,377 (միջին)***	***36,000***	***75,000***	***149,300***	***200,000***
Պայմանագրային ենթասպայական և շարքային կազմեր, կամավորագրված	***30,221 (միջին)***	***36,000***	***50,000***	***116,200***	***150,000***
Պարտադիր ժամկետային	***30,000***	***36,000***	***25,000***	***91,000***	***100,000***

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը չի բխում ռազմավարական փաստաթղթերից, Կառավարության 2021-2026 թթ. ծրագրից: